ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մարտի 2026 թվականի N 124-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 259-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Սյունիքի մարզպետի 2026 թվականի մարտի 6-ի N 89-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2026 թվականի մարտի 27-ի N 660 Արձանագրությունը՝

ո ր ո շ ու մ եմ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2025 թվականի մայիսի 30-ի «Գայանե Գրիգորյանին «Գեղանուշի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու, նրա հետ աշխատանքային պայմանագիր կնքելու և Աննա Պետրոսյանին նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունների կատարումից ազատելու մասին» N 259-Ա որոշման 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

««Կապանի թիվ 4 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Էլմիրա Զաքարյանին» բառերը և թիվը փոխարինել ««Կապանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Նունե Ջավադյանին» բառերով և թվով:

2026-03-27 17:03:27 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. մարտի 27